

ՄԱՐԻՆԵ ՎԱՅԱԳՆԻ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի բանգարանի երաժշտական ֆոնդի ավագ գիտաշխատող, երաժշտագետ

Հեռուստաէկրանից ամեն օր մեզ են ներկայացնում աշխատում Կոմիտասի ունեցող սարսափազդու, սհարկու իրադարձություններ, վայրագ Կոմիտասներ: Չոհվում են հազարավոր մարդիկ, էլի հազարավորներ թափառում են աշխարհով մեկ ու չգիտես թե ումից պահանջում են իրենց Կոմիտասի արևի փակ: Մինչդեռ նրանք, որոնց պարմառով վերջիններս դարձել են գաղթական, քանդում, ավերում, պայթեցնում են նախնիների թողած ժառանգությունը և անում են դա ոչ վրեժի, ոչ դաժանության, ոչ բարբարոսության հեղուկներով, ոչ էլ Կոմիտասի մի բան կառուցելու համար: Այլ պարմությունն է նախնիների հեղուկ մաքրելու, ջնջելու

րի կերպած կոթողներով: Իսկ կրոնը ենք մեր մեծերի թողած արժեքների ու արե՞ր ենք նրանցից արագած ժառանգությանը: Ունե՞նք Կոմիտասի գիտակցությունը, որ ոչ միայն պահպանենք ու վայելող ենք այլ նաև շարունակողն ու փոխանցողը պիտի լինենք մեծ, շար մեծ հարստության ինչպես, օրինակ, Կոմիտասն է: «Ժամանակիս վայրագութիւններէն ըստ կարելոյն հեռու պահելով միտքս ու զգացումներս՝ անդադար կաշխատիմ կարելուր ուսումնասիրութիւններով» (1. էջ 234): Գրել է վարդապետը 1914 թվականի հոկտեմբերին Երվանդ Հակոբյանին: Մասնակցելի սիրո և հարգանքի եզակի դրսևորում է առ հայրենիք և յուր ժողովուրդ, երբ համաշխարհային թոհուրոհի մեջ արվեստագետն աշխատում է, որ ժառանգությունը թողնի:

Կոմիտասը հայ երաժշտության պարմության մեջ այն միակ սրբազանընդուն է, որի մասին ամենից շար են գրել ու խոսել: Նրա երկերն ամենից շար են հրապարակել, կատարել, իսկ սրբազանընդուն ուղին բազմիցս վերլուծել: Կոմիտասի կերպարն առանձին թեմա է հայ կերպարվեստում, էլ չենք խոսում գրականության մասին: Բայց, այնուամենայնիվ, «ինչ՞ու և ինչպե՞ս» հարցերը կոմիտասական մշտական ուղեկիցներն են դեռևս: Խոսքն

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

նպատակով, որպեսզի հեղուկ հորինեն իրենց համար շահավետ մի պարմություն: Բայց միշտ չէ, որ այս գործելակերպն իրականացվում է այդպես՝ բացահայտ: Այդ ուժը հաճախ գործում է գաղտնագողի, դանդաղ, Աստվածաշնչյան օջի պես հմայելով ու շողորթելով, և հասնում իր նպատակին մեր իսկ չեռքերով: Միամիտ ենք դեռ, շար միամիտ: Հագարանյակների ընթացքում քաղաքակրթություն ենք սրբազան ու մի կարգին փրկություն չենք անում: Միամիտ ենք դեռ, թե գայթակղվող, հարմարվող ու անարարներ, կամ թե հոգնել ենք մեր բեռը կրելուց: Բայց շար ենք սիրում հպարտանալ մեր նախնիներ-

այս անգամ վարդապետի երաժշտագիտական գործունեության մասին է: Հայրի է, որ Կոմիտասը 1896 – 1899 թթ. ուսանել է Բեռլինում՝ Ռ. Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում և զուգահեռաբար, սովորել ու ավարտել է Ֆրիդրիխ Վիլհելմ (այժմ Հումբոլդտի անվան) համալսարանի փիլիսոփայության բաժինը: Վարդապետի առաջին կենսագիր՝ բանասեր, բանասրբեղծ, հասարակական գործիչ Թորոս Ազարյանն իր «Կոմիտաս վարդապետ» (Կ. Պոլիս, 1931 թ.) գրքում այդ մասին գրում է. «1899 Յուլիսին Կոմիտաս Վրդ. կ'աւարտէ երաժշտանոցի տեսական ու գործնական ամբողջ դասընթացը: Աւարտական թէգն էր «Քիւրտ երաժշտությունը», որ մեծ հետաքրքրություն արթնցուց իբրև աննախընթաց գործ» (2. էջ 24):

Բայց ինչ՞ու: Ինչո՞ւ «Քիւրտ երաժշտություն», երբ վարդապետն իր ամբողջ կենսական, գիտական, զգացական ուժերը ծառայեցնում էր մեկ նպատակի՝ այն է ազդարարել ի յուր ամենքի, որ «Հայր ունի ինքնուրույն երաժշտություն»: Օրար մշակույթի մասին «թէզ» գրելու հանգամանքը պարզունակ ենթադրությունն է, թե ունի փաստական հիմնավորում, արդյո՞ք այդ «թէզն» էր ամփոփումը «երաժշտականի փոխանցման ու գործնական ամբողջ դասընթացի» և, վերջապես, որպե՞ղ է վարդապետը պաշտպանել իր «թէզը», Ռ. Շմիդտի մասնավոր երաժշտանոցում, թե Ֆրիդրիխ Վիլհելմ համալսարանում, ո՞րն է Թ. Ազարյանի աղբյուրը: Աղբյուրը նշված չէ: Ցավալիկ այն է, որ հաջորդ կենսագիրների մի զգալի մասը կրկնել է Կոմիտասի «ավարտա-



Կոմիտասը ուսանել է Բեռլինում, 1896-1899 թթ.

կան թեզի» մասին այս տեղեկությունը, մի դեպքում առանց աղբյուրը նշելու (3. էջ 66, 59), մյուս դեպքում՝ որպես ծանոթագրություն նշելով, թե այն չի պահպանվել (4. էջ 165): Եվ այսպես փարիսներ շարունակ պնդել են թեզի գոյության մասին, երբ չկա այն հաստատող որևէ փաստ: Իր մեջ անորոշության փարքեր պարունակող այս մեկ արտահայտությունը՝ «1899 Յուլիսին Կոմիտաս Վրդ. կ'աւարտէ երաժշտանոցի տեսական ու գործնական ամբողջ դասընթացը: Աւարտական թէզն էր «Քիւրտ երաժշտությունը», որ մեծ հետաքրքրություն արթնցուց իբրև աննախընթաց գործ», բավարար կենսունակություն է դրսևորել հասնելու համար մինչև մեր օրերն ու դառնալ իր շուրջը հյուսվող անհիմն պատմություն: Ահա բոլորովին վերջերս, 2012 թվականին Կրպագրված մի գիրք՝ «Ուսուր Բեկ, ուրվագիծ եզրի ժողովրդի, ազգապետերի մի փոխմի, հայ-եզդիական կապերի պատմություն» (5.): Այս պատմությունը հյուսվել է փարքեր աղբյուրներից, հաճախ չհիմնավորված տեղեկություններ քաղելու, իսկ անառարկելի իրողություններն աղավաղված ներկայացնելու մեթոդով: Վարդապետի կենսագրական դրվագների բազմաթիվ այլ աղավաղումների շարքում էական տեղ է փրված նաև «Քիւրտ երաժշտությանը»: Օրինակ՝ հեղինակը գրում է. «1899 թ. օգոստոսի 20-ին Կոմիտասը պաշտպանում է իր դիպլոմային աշխատանքը «Քրդական երաժշտություն» թեմայով» (6. էջ 96): Որտեղից հայտնվեց այս ամսաթիվը: Կենսագիրներից որևէ մեկը և ոչ էլ վարդապետն ինքը կրթությունն ավարտելու ճշգրիտ ժամկետ չի նշել իր նամակներում, կամ ինքնակենսագրության մեջ: Հաջորդ էջին, կրկին խոսելով դիպլոմային մասին հեղինակը շարադրել է. «1899-ին Կոմիտասը պաշտպանեց քրդական երաժշտությանը նվիրված իր դիպլոմային աշխատանքը և ավարտեց Բեռլինի Ֆրեդերիկ Վիլհելմ արքայական համալսարանի երաժշտա-փիլիսոփայության պատմության բաժինը, միաժամանակ ստացավ Ռեխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայի ավարտական վկայականը» (6. էջ 97): Անմիջապես հարց է ծնվում՝ եթե համալսարանում Կոմիտասը դիպլոմային է պաշտպանել, ապա ստացել է համապատասխան վկայական կամ թեզին վերաբերող վկայագիր: Ինչպե՞ս կարելի է թեզ պաշտպանել մի հաստատությունում և «միաժամանակ» մեկ այլ հաստատությունից վկայական ստանալ:

Բոլորը կհամաձայնեն, որ առաջ եկած հարցերի պատասխանները գրվելու ամենահավասարի աղբյուրը հենց Կոմիտաս վարդապետի թողած գրավոր ծառանգությունն է: Ուրեմն հարկավոր է դիմել այդ աղբյուրին և պարզել մեծ մրավորականի հետաքրքրությունների շրջանակը 1890-1899թթ: Արդյո՞ք Կոմիտասի ուսումնասիրությունների ցանկում կա քրդական ժողովրդական երաժշտությանը նվիրված որևէ պատասխիկ: Ժամանակագրական կարգով ներկայացնեն նրա հրատարակումների ցանկը: 1891թ. «Ազգային օրհներգ», Վաղարշապատ, 1894 թ. «Հայոց եկեղեցական եղանակները», «Արարատ» Վաղարշապատ, 1895 թ. «Շար Ակնա

երգերի», Վաղարշապատ, 1897 թ. «Տասն եւ վեց շախն երգեցողություն Պարարագի», «Արարատ» Վաղարշապատ, 1897 թ. «Հայոց եկեղեցական երաժշտությունը ԺԹ դարում», «Արարատ» Վաղարշապատ, 1898 թվ. «Երգեցողությունը Ս. Պարարագի», «Արարատ» Վաղարշապատ, 1899 թ. «Die Armenische Kirchenmusik» (Հայ եկեղեցական երաժշտություն), «Sammelbände der internationalen Musik-Gesellschaft», Leipzig: Քրդական թեմայի բազմապատկերումն ակնհայտ է:

Այժմ անդրադառնանք այն նյութերին, որոնք 1899 թ. դեռևս անփյառ էին: Ահա վարդապետի հայկական նուրագրությանը գրված, չեռակերպ ժողովածուն՝ «Չայնագրած Ազգային գիղական-ժողովրդական երգերի, պարերի Հավաքածու», հաւաքեց եւ ձայնագրեց Սողոմոն Ա Սարկաւագ Սողոմոնեանց, միաբան Ս. Էջմիածնի, 94, 9/բ, Ս. Էջմիածին» (7. էջ 318): Այստեղ գեղեղված են 37 ժողովրդական երգերի նուրային և բանահյուսական տեքստ, ինչպես օրինակ «Երկինքն ամպել ա», «Գարուն ա», «Զիմ գլխի ֆաթեն կիտամ», «Ղարսա բերդը» և այլն: Երգերից մի քանիսի խոսքերին կից Կոմիտասը տեղեկություն է տալիս երգի փարքերակների մասին: Օրինակ «Միրել եմ սեւն երեսին» երգի երկու օրինակ է ներկայացված և նշված է. «Այս երգը 2 փարքերակ ունի. Առաջին փողը Շիրակի եղանակն է, երկրորդը՝ Բզդիրի. չափը բոլորովին համապատասխան, եղանակն այլ. խօսքերի զանազանությամբ քիչ է, միայն բարբարոն է փոխուում. մենք գերադասեցինք Արարատեան բարբարոն»: Երկրորդ չեռագիր ժողովածուն, դարձյալ գրված հայկական նուրագրությանը վերնագրված է՝ «Հոգեւոր եղանակներ, Հաւաքեց Սողոմոն Ա Սարկաւագ Սողոմոնեանց, միաբան Ս. Էջմիածնի, 1893 թ., 24/գ, Ս. Էջմիածին» (7. էջ 332): Այստեղ շարադրված են Սահակ արեղա Անարունու և Գևորգ արեղա Աբրահամյան Ռշտունու երգածից նուրագրված այնպիսի եղանակներ ինչպես «Հավիկ մի պայծառ», «Հավուն, հավուն», «Տեր ողորմեա» և այլն, որոնք ոչ միայն հայ մոնոդիայի, այլև, վարսահար կարելի է սսել, համաշխարհային երաժշտական մշակույթի անզրահարելի և անանց արժեք են: Մեկ ուրիշ օրինակ՝ կոչը կազմով նուրային տեքստ, որի վրա Կոմիտասի չեռքով նշված է. «Մենք դաշնակութեամբ. կամ նուագակցութեամբ. Կոմիտաս վարդապետ, 1897-1998. Բերլին» (7. էջ 462): Առաջին էջին գրվածը «Օրհնեցէք, գովեցէք...» հոգևոր եղանակը ներդաշնակելու մի փորձ է, հաջորդ էջին՝ «Մի գեղեցիկ պարզ գիշեր էր...» մեղեդին բազմաշայնելու (սուպրանոյի և ալտերի համար) օրինակ, երրորդը և չորրորդը՝ «Տէր կեցո...» և «Հայր մեր» եղանակների բազմաշայն մշակման սեագրություններն են: Թրվարկված օրինակների կողքին քրդական թեմայի գոյությունը դուրս է փրամաքանությունից:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Պարոնա-Բանասիրական Հանդեսում (8. էջ 48) երաժշտագետ Ռոբերտ Աբայանը փայլաբեր է մի ընդարձակ հոդված «Կոմիտասի ուսումնառությունը Բեռլինում» վերնագրով, որտեղ մանրամասն ներ-

կայացրել է վարդապետի կենսագրության գերմանական շրջանը:

Այսինքն՝ ինչ է ուսումնասիրել Կոմիտասը Ռ. Շմիդտի կոնսերվատորիայում և համալսարանում, ինչ են պահանջել նրա ուսուցիչներն իրենց ուսանողից և ինչ հանրությունների է տիրապետել շնորհալի սանը կրթությունն ավարտելիս: Կոմիտասն ստացել է երկու ավարտական վկայական՝ մեկը կոնսերվատորիայի կողմից Ռ. Շմիդտի ստորագրությամբ և կնիքով, մյուսը Ֆրիդրիխ Վիլհելմ համալսարանի կողմից փիլիսոփայության ֆակուլտետի ղեկավար Կեյսերի և ռեկտոր Հ. Շվարցի ստորագրությամբ: Պրոֆեսոր Ռ. Աբայանը բարձրագույնագույն ներկայացրել է այս երկու վկայականների բովանդակությունը, որ մեջբերում են առանց փոփոխության. «Պր. Կոմիտաս վարդապետ Գևորգյանը, Էջմիածնի վանքից, 1896 թ. հուլիսից մինչև 1899 թ. հուլիս եղել է իմ աշակերտը: Բնականից օժտված լինելով երաժշտական արտակարգ սուր խողովակով և վառ երևակայությամբ, այր. Կոմիտաս Գևորգյանը ինձ մոտ, անխոնջ ջանասիրության շնորհիվ, ինչպես տեսության և կոմպոզիցիայի, այնպես էլ երգեցողության մեջ հասավ ավելի քան գոհացուցիչ արդյունքների ու դառավ հիմնովին կրթված, լուրջ երաժիշտ: Պր. Կոմիտաս Գևորգյանը կատարելապես տիրապետում է հարմոնիայի ուսմունքին, խիստ և ազատ ոճի շարադրությամբ, ձևերի տեսությամբ և գործիքավորմանը, այնպես որ, ունենալով նաև մանկավարժական շնորհք, միանգամայն ի գորու է այդ բոլոր բնագավառներում նաև ուսուցչություն անելու: Նա նաև կարող է լինել երգչախմբի և նվագախմբի հմուտ դիրիժոր, ընդ որում, դրանում նրան շատ կօգնի իր լավ մշակված հաճելի բարիտոն ձայնը»: *Ստորագրված է՝ «Ռիխարդ Շմիդտ, պրոսական արքայական պրոֆեսոր և մուզիկոլոգիկոս: 2 սեպտեմբերի, 1899, Բեռլին, Պոստդամշտրասս», 104»:*

Համալսարանական կրթության մասին վկայականում գրված է. «Մենք՝ Բեռլինի Ֆրիդրիխ Վիլհելմ համալսարանի Ռեկտորը և Սենատն այս ավարտական վկայականով հաստատում ենք, որ այր. Կոմիտաս Գևորգյանը՝ ծնված Կոտիսյանում (Թուրքիա), կոշկակարի զավակ, հիմնավոր երաժիշակություններով 1896 թ. հոկտեմբերի 22-ին ընդունվել է մեզ մոտ և մնալով մինչև 1899 թ. Ամառային կիսամյակի վերջը, փիլիսոփայության բնագավառում երևան է բերել ջանասիրություն: Համաձայն ներկայացված վկայությունների, Համալսարանի ծրագրով նա լսել է հետևյալ դասախոսությունները...»: *Այնուհետև թվարկվում են Գերմանիայի և համընդհանուր երաժշտության պատմության (սկսած XVI դարից) մի շարք դասընթացներ, նաև Եկեղեցական երաժշտության պատմության ներածություն, երաժշտագիտության ներածություն, գերմանական երաժշտության պատմություն, երաժշտական գործիքների, նոտագրության պատմություն, երաժշտական գեղագիտություն, երաժշտական քննադատության պատմություն և երաժշտագիտական վարժություններն նվագարանների բանգարանում: Ինչպես պարզվեց, Կոմիտասից չի պահանջվել ոչ դիպլոմային և ոչ էլ*

դիտերապիոն աշխատանք: Իսկ նրան տրված վկայականներում, որոնք պահվում են Գրականության և արվեստի բանգարանում, որևէ ակնարկ չկա ավարտական թեզի կամ ենթադրվող թեզի բովանդակության մասին: Արդյո՞ք գաղղնի կապիտեր վարդապետն իր ուսումնասիրությունը, եթե այն գոյություն ունենար:

Ահա այսպիսի կրթություն ստացած և երաժշտական հիմնավոր գիտելիքներով Կոմիտասը 1899-ի աշնանը վերադարձավ Էջմիածին: Ուսումնառության տարիներին վարդապետն ակտիվ նամակագրություն էր պահպանում իր ընկերների, բարեկամների հետ: Առանձին հեղափոխություն են ներկայացնում ձեռնարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին հասցեագրված նրա նամակները: Դրանք ավելի նման են հաշվետվության քան փրկավորությունների մասին շարադրված պատմության: 1899 թ. հունիսին նա գրել է Կ. Կոստանյանին. «Անցեալները մեծ յաջողութեամբ երկու դասախոսութիւն կարդացի Բերլինի երաժշտանոցում. հայոց երաժշտութեան մասին՝ առհասարակ եւ արեւելեանի մասին՝ մասնաւոր տեղեկութիւն միայն. այս կրկին դասախոսութիւնս մեծ զարկ տուաւ երաժշտական շրջանում յայտնի լինելուս, նամանաւանդ, երբ անդամ ընտրուեցայ Միջազգային երաժշտական ընկերութեան, ուր միայն յայտնի երաժիշտներն են անդամակցում: Դասախոսութիւնս տպել տալու ստիպեցին համալսարանի ուսուցչապետներս, եւ Ընկերութեան գիտական ժողովածուի հրատարակութեան առաջին համարում, որ լոյս կտեսնի օգոստոսի մէջ, հիւրընկալուեցաւ իմ յօդուածս էլ, այնպէս որ այժմ ստիպուած եմ տպագրութեան համար պատրաստել եւ հասցնել» (1. էջ 59): *Ընկերության «Sammelbände der internationalen Musik-Gesellschaft» հանդեսում 1899 թ. տպագրվել է Կոմիտասի «Die Armenische Kirchenmusik» (Հայոց եկեղեցական երաժշտություն) հոդվածը, որի մասին անթարքայց հպարտությամբ գրել էր նամակում: Մամուլը բավականին արագ և հանգամանորեն անդրդարձել է վարդապետի դասախոսություններին: Օրինակ՝ «Հանդես ամսօրեան» «Հայկական երաժշտութիւնն ի Բերլին» հոդվածում մանրամասնորեն նկարագրել է Կոմիտասի ելույթը. «Բերլինէն «Նոր-Դարին» (թ. 115) կը գրեն թէ արժանապալի Կոմիտաս Վարդապետ ...պրոֆեսորներու, երաժշտագէտը դոկտորներու, անոնց կանանց, հայ եւ գերմանացի ուսանողաց ընկրեալ հասարակութեան մը, առջեւ հայկական ժողովրդական եւ եկեղեցական երաժշտութեան մասին դասախօսութիւն մը կարդացեր է, երաժշտանոցի (conservatoire) դահլիճին մէջ՝ ըստ խնդրոյ երաժշտական նախագահ Պրոֆ. Ֆլայշերի: Հայոց եկեղեցվոյն հակիրճ պատմութենէն ետքը՝ արժ. Կոմիտաս Վր. ցոյց տուեր է հայոց եկեղեցական, ժողովրդական եղանակներու կազմութեան տարբերութիւնը: Առ այս վախճան՝ կազմուած էր յառաջագոյն չորս հոգիէ (գերմանացի) բաղկացած խումբ մը, որոնք այս եղանակներն երգեցին. Եկեղեցական երգերն երգուեր են՝ Փառք թեզ Տէր. Օրհնեցէք, գովեցէք. Ով զարմանալի. Այս խորհուրդ լցաւ. Սուրբ*

երաժշտական ՅԱՅԱՍՏԱՆ 2(53)2017

# Կ ո մ ի տ ա ս ա գ ի տ ո թ յ ո լ ն

եւ Տէր եւն. Իսկ ժողովրդական երգերեն՝ Սոնա եար. Անչրեւն եկաւ, Այ փոյս, Հերոցն արի, Հով արէք սարեր, Հայրիկ, Հայրիկ: Կոմիտաս Վր. Երգեր է քրդերէն՝ Լէլէ գարէ, Հովուի ոչխարներ, Աղ Կոյնգեմ, եւն. Արաբերէն՝ Արա էյ Թաղրովնի, Ջէմիլքամիլ. Եւն. փանկերէն՝ Բուզի շէր, Քիմ փէմիշ փիր, Բահարօղլու, եւն.: Այս ամբողջն երգուեր են՝ ցուցընելու համար ասոնց եւ հայկական եղանակաց մէջ փարբերութիւնը: Բաց սարի Կոմիտաս Վր. ցուցրեր է թէ ինչպէս կը կարդացուին Աւետարանը, սաղմոսները, երգեր է եւ շարականներ եւն, եւն:

Թղթակիցը կը գրէ թէ Berliner Morgenpost-ին մէջ՝ գերմանացի քննադատ մը հրճուանքով եւ գովեստի խօսեր է այս դասախօսութեան եւ հայ ժողովրդական երգերուն վրայ, զորոնք ուրախ եւ գերմանական սրտին եւ զգացողութեան շար մօտիկ գրեր է» (10. էջ 253): Ինչպէս րեւանք վարդապետը հայ ժողովրդական երաժշտութեան հետ համեմատելով ներկայացրել է արեւելյան փարբեր ժողովորդների երգեր դրանց ընդհանրություններն ու փարբերությունները ցուցադրելու համար: Բայց սա դասախոսություն էր, ոչ թե գիտական թեզի պաշտպանություն և խնդրո առարկան ամենևին էլ քրդական երգերը չէին:

Ուրեմն ինչպէ՞ս, ինչ՞ու և որտեղի՞ց հայրնվեց և արդեն մեկ դար շրջանառվում է «Քիրք երաժշտությունը», որ մեկ ներկայացվում է որպէս դիպլոմային աշխատանք, մեկ էլ որպէս դիսերտացիա, քանի որ անհիմն է, գուցե միամտաբար ասված կամ պարփակված գրված, բայց, բոլոր դեպքերում, առանց հիմքի:

Վերադառնանք Թորոս Ազատյանին: Գրականության և արվեստի քանգարանում պահվող նրա արխիվը շար հարուստ է: Ի թիվս այլ փաստաթղթերի այսպէս կարելի է գտնել գրեթէ ամբողջ այն նյութը, որը Թ. Ազատյանը բարեխիղճ կերպով հավաքել է Կոմիտասի մասին գիրք գրելու համար: Հավաքված են մեծ թվով մամուլի կրթություններ, արտագրված հոդվածներ և այլն: Ահա այդ կրթությունների մեջ պահվում է 1911 թվականին «Բիզանդիոնում» լույս տեսած մի հոդված, որի վերնագիրն է «Հայ երաժշտանոցին առիթով», հեղինակն է Արշակուտի Թեոդիկը:



Արշակուտի Թեոդիկ


Նա իր ժամանակի ամենակրթված և առաջադեմ կանանցից մեկն էր: Բարձրագույն կրթությունն ստացել էր Լոդոնում և Փարիզում, Ամուսնու՝ Թեոդիկի հետ մասնակցել էր «Ամենուն փարեցոյցի», «Բիզանդիոնի» հիմնադրմանը, սկսելով հասարակական գործիչ էր և

քարգմանիչ: Հայրնի է, որ Կոմիտասը ցանկություններ Կ. Պոլսում երաժշտանոց բանալ: Այս գաղափարն այնքան է որգևորել տեղի մտավորականությանը, որ սպազա երաժշտանոցի համար նյութական միջոցներ հայթայթելու և դրանք փնտրելու նպատակով կազմվել է հանձնախումբ, առաջարկվել է նաև կազմել ուսումնական ծրագիր և դասավանդվող առարկաների ցանկ: Էսկանն այն է, որ խոսքն ազգային երաժշտանոցի մասին էր, որտեղ պետք է ուսուցման եվրոպական մեթոդն ու փորձը կիրառվեր ազգային երաժշտական կրթություն փաշտու համար: Բազմաթիվ հոդվածներ են տպագրվել այդ մասին մամուլի էջերին: Ահա Արշակուտի Թեոդիկն էլ իր հոդվածում Կոմիտասին ներկայացնելով գրում է. «...աշակերտած է Ռիխարդ Շմիթի, յետոյ յաճախած Ֆրիդրիխ Վիլհելմ համալսարանը, ուր աւարտած է երաժշտական-փիլիսոփայական-պատմական գիտութիւնները, Պէլլէրման, Ֆլայշէր և Ֆրիտլէմտեր յայտնի Բրոֆէսէսօններն իրեն ուսուցիչ ունենալով: Աւարտականի իր թէզն եղած է Քուրդ երաժշտութեան վրայ ուսումնասիրութիւն մը որով հետաքրքրուած են շատեր՝ իբր եզակի և ցայն վայր անծանօթ մնացած գործ» (11. էջ 1): Ահա, առաջին անգամ այսպէս է խոսվում «Քիրք երաժշտութեան» մասին: Մեկ փարի առաջ՝ 1910-ին, Թեոդիկներն «Ամենուն փարեցոյցում» տպագրել են Կոմիտասի ինքնակենսագրությունը (12. էջ 214), որտեղ խոսք անգամ չկա քրդական երաժշտութեան մասին: Ուրեմն ի՞նչն սրիպեց փրկիկն Թեոդիկին «Քիրք երաժշտութիւն» թեմայով թեզ հորինել ու կապել վարդապետի անվան հետ: Նյութին վարդապետները հանգամանքը, թյուրիմացությունը, թե վախը, հարմարվողականությունը, կամ մեկ այլ պարմառ, օրինակ վարդապետին հարվածի փակ չղնելու հանգամանքը: Մամուլը, թե՛ Պոլսում, թե՛ Թիֆլիսում հետևում և արագ լուսաբանում էր Կոմիտասի բոլոր տեղաշարժերը, մեկնաբանում նրա համերգները, գնահատական տալիս նրա գործունեությանը: Հարկապէս սկսել էին Բիզանդի Բէչեանի խմբագրած «Բիզանդիոնը», «Ամենուն փարեցոյցը», «Ազատամարտը»: Հոդվածագիրների մի մասը ողջունում, խրախուսում էր ազգային երաժշտանոցի գաղափարը, մյուսները զգուշանում և անվտանգություն էին հայտնում Պոլսում որևէ բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալու նպատակահարմարության առնչությամբ. «Պոլսոյ մէջ հիմնուի, Օսմանեանն ու Հայկականն իրարու մրցակից չե՞ն համարուի արդեօք, եւ հայկական հաստատութեան ընթացքն աւելի դժուար չըլլա՞ր նոյն իսկ Հայ ուսանողներուն համար» (13. էջ 1) գրում էր «Բիզանդիոնը»: Նույնն էր և Կոմիտասի նկատմամբ: Ունանք ջերմ խոսքերով մեկնաբանում էին նրա գործունեությունը, ներկայացնում նրան որպէս փրկիչ: Իսկ կրոնական ժողովը միջնադարյան ինկվիզիցիայի մոլեռանդությամբ իսկական հալածանք էր սկսել նրա նկատմամբ: Թ. Ազատյանի հավաքած մամուլի կրթությունների մեջ կա շար հետաքրքիր մի հոդված, որի վերնագիրն է՝ «Բաց անմակ առ Տ. Կոմիտաս վարդ», հեղինակն է Սե-

րովբե քահանա Պուրմայանը: Նյութը պայագրված է 1911 թվականի նոյեմբերին (ցավոք հնարավոր չեղավ պարզել, թե որ թերթում է հարպարակվել): Նամակագիրն աջակցություն է հայրնում Կոմիտասին և հորդորում չվհարվել. «մի ցալիք սակայն թե կ, - հալածեն Ձեզ», և դառնությամբ նշում. «երբեք անսովոր բան մը չէ մեզի համար, Տ. Հայր, որ մեզմե մեկը մեզ կառավարող իշխանութեան դիմելով Ձեր համերգն իբր «խռովարարական» ներկայացում մատնե՞նք անոք» (7. անմշակ): Այսինքն արելությունն այնքան մեծ էր վարդապետի հանդեպ, որ պարբերաբար էին նրան հանձնել թուրք իշխանություններին որպես ըմբոսություն, ազգայնամոլության կոչ հնչեցնող մի խռովարարի: Նրա հռչակը հանգիստ չէր պալիս կրոնական ժողովի անդամներին, քանի որ սովորել էր իրենց միասպառ, չանջրալի գործունեությունը: Նրանց վահեցրել էր Կոմիտասի քերած քարնությունը և ազգային ելևէջի հաղթական փարածումը Պոլսահայության մեջ: Կարո՞ղ էր «Քիրար երաժշտությունը» հորինվել ի պաշտպանություն Կոմիտասի: Թերևս կարող էր: Ա. Թեոդիկը «Ազգանվեր հայտիյաց ընկերության» անդամ էր, որի նպատակը հայոց մեջ օրիորդաց վարժարաններ բանալն ու գրագիրություն փարածելն էր, իսկ 1909-ին, Աղանայի ջարդերից փոժածներին օգնություն հասցնելը: 1910-ին «Ամիս մը Արանա» վերնագրով փրկվին Թեոդիկը հրապարակեց ակնաւորեսի իր վկայությունները: «Արդի բարոյագիրութիւն» դասագրքի հեղինակն այնքան միամիտ չէր, որպեսզի թյուրըմբռնման հերևանքով շփոթություն ստեղծեր: Ուրեմն ինչու՞ հաջորդ հողվածագիրներն ու կենսագիրները չարուզեցին այդ փրկելությունն այլ կուրորեն պարմենեցին Ա. Թեոդիկի գրածը, երբ Կոմիտասն ինքն իր ինքնակենսագրություններից որևէ մեկի մեջ չի գրել «Քիրար երաժշտության» մասին: Արդյո՞ք միայն ժամանակի պահանջն էր պարմառը, թե պարզ սովորությունը:

Վարդապետն ունի ինքնակենսագրության երեք փարբերակ (Կոմիտաս, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, գիրք Բ), որոնք գրել է 1908 թվականին և որտեղ վերջում, ներկայացնում է իր պայագրված և անփոխ աշխատանքների ցանկը: Գրվածքս չժանրաբեռնելու համար միայն նշեմ, որ կոմպոզիտորն իր պայագրված երգարանների ցուցակում նշել է 1903 թվականին Մոսկվայում Յուրգենսոն հրատարակչության պայագրած «Melodies Kurdes» մասին: Սա փոքրիկ երգարան է կազմված 13 քրդական ժողովրդական երգերից: Գծային նուրագրությամբ ներկայացված են երգերի մեղեդիներն ու դրանց հայարառ և լատինարառ քրդերեն խոսքերը: Երբ է կոմպոզիտորը գրի առել դրանք հայրնի չէ: Նրա արխիվում այդ մասին վկայող փաստաթուղթ չկա: Հայրնի է, որ այս փոքրիկ ժողովածուն, կազմվել է «Էմինյան ազգագրական ժողովածուի» Ե հատրրի համար որպես հավելված: Խմբագիրը Գ. Խալաթյանցն այդ մասին գրում է. «Էմինյան ազգագրական ժողովածուի խմբագրությունը՝ քրդական երգերի եղանակների մասին որոշ մի գաղափար տալու դիտմամբ հանձնեց ժողովրդական երգի

մասնագետ արժ. Հայր Կոմիտաս վարդապետին ձայնագրելու այդ եղանակները ելրոպական խազերով» (14. էջ 188): Մեկ այլ անդրադարձ քրդական ֆոլկլորին կարելի է գրնել վարդապետի 1905 թվականին Թիֆլիսի Հովնանյան դպրոցի դահլիճում կարդացած դասախոսության մեջ, որի թեման էր «Հայ ժողովրդական և եկեղեցական երգերը»: Դասախոսության սղագրությունն առաջին անգամ պայագրվել է «Մշակ» թերթում նույն թվականին: Խոսելով երաժշտության և բնության կապի մասին վարդապետն ասում է. «...երաժշտության եղանակը, ոգին կախումն ունի բնությունից: Իսկ ինչ վերաբերում է նրա բովանդակության, դա կախված է ժողովրդի կյանքի պայմաններից: Քրդերը իբր լեռնական ունեն մի երաժշտություն, որ գորպայես կրում է բնության կնիքը, իսկ իբրև թափառաշրջիկ և խաշնարած՝ նա, այդ երաժշտությունը՝ անկայուն է և պտտվում է ոչխարների և այծերի շուրջը» (15. էջ 1, 2): Կա՞ Կոմիտասի արխիվում այլ վկայություն այն մասին, որ վարդապետը գրաղվել է քրդական ֆոլկլորի ուսումնասիրությամբ: Այո, կա: Նրա արխիվում կարելի է գրնել առանձին թերթերի վրա իր չեռքով, մատրիտով, հայկական նուրագրությամբ գրված մի քանի երգ (7. ֆ. 349): Էջերի վրա Կոմիտասը նշել է. «քրդերեն»




Քրդերեն դեռ չի նշանակում քրդական մշակույթ: 1892-ին Կոմիտասն այցելեց իր ծննդավայր Քյոթահիա, որտեղ իր հարազատների և բարեկամների երգածից գրի առավ թրքերեն բազմաթիվ երգեր: Դրանք ամփոփեց մի փետրի մեջ և վերնագրեց՝ «Արեւելեան թրքական եղանակներ, հաւաքեց Մողմոն Ա Սարկավազ Մողմոնեանց Միաբան մայրափող Ս. Էջմիածնի, 1892, 15/ժա»: Ինչպես հայրնի է հայերենը Քյոթահիայում արգելված էր: Քաղաքի բնակիչները թրքախոս էին: Հայերենը զուր եկեղեցական լեզու էր և առօրյա կիրառություն չունէր: Քյոթահիացիք ստեղծագործում էին թուրքերեն: Կոմիտասի թրքական երգերի փետրի բոլոր էջերի լուսանցքներում գրված է փոխալ երգը կատարողի անունը և ազգանունը: Օրինակ՝ առաջին էջի լուսանցքում կարդում ենք. «երգեց Խաչիկ Էֆենդի Պալանսեան» կամ 15-րդ էջին գրված է. «երգեցին տիկնայք Կիլիմէ եւ Չմրուխտ Մողմոնեանները» (7. ֆ. 352): Բոլոր երգիչները բացառապես հայեր են: «Քրդերեն» նշումը կրող թերթերից մեկի լուսանցքում ևս գրված է երգը կատարողի անունը՝ «Պեյրոս Ասրուսմարտրեան»: Մեկ այլ էջի վրա գրված է. «Քրդական հնգետակի շրթան» և հայկա-

երաժշտական ՅԱՅԱՍՏԱՆ 2(53)2017

# Կ ո մ ի տ ա ս ա գ ի տ ո թ յ ո Ւ Ն

կան նուրագրությանը շարադրված է քրդական եղանակի չսյնաշարը:



Հաջորդ էջի գրվածքը մեկ գծով վերից վար ջնջել է և վրան քանարով գրել. «անպար» (7. ֆ. 349): Ահա նրա արխիվում եղած քրդական երաժշտությանը վերաբերող նյութը, որը շար հեռու է գիտական թեզ կոչվելուց:

Որպես լայնախոհ արվեստագետ Կոմիտասը գրի է առել և ուսումնասիրել թուրքական, ֆիննական, քրդական և այլ ժողովուրդների երգեր: Որպես անհայտ նա կարող էր շփվել ցակացած անձի հետ, որպես երաժիշտ-ազգագրագետ պարտավոր էր գիտենալ միևնույն փաստաթղթերում բնակվող ու սրբազանությունը ժողովուրդների երաժշտությունը:

Մեզանում այսօր շրջանառվում է մի կարծիք, իբր Կոմիտասի «Քիրոզ երաժշտություն» թեզը պետք է որոնել Բեռլինի Հունթրոդի համալսարանի արխիվում: Գրականության և արվեստի թանգարանը հենց այդպես էլ վարվեց: Տնօրեն պրն. Կարո Վարդանյանի գլխավորությամբ, նամակով դիմեց արխիվին սույն խնդիրը պարզաբանելու և հարյուրամյա պարունությանը վերջակետ դնելու նպատակով: Մրաժամանակ լիազորեց Հունթրոդի համալսարանի փիլիսոփայության բաժնի մագիստրատուրայում սովորող Անի Մկրտչյանին հեղինակուհի լինել հարցի լուծմանը: Պատասխանը ստացանք 2016-ի հունվարի 4-ին: Համալսարանի արխիվի ղեկավար Ալեքսանդրա Պաուլիչեկին Անի Մկրտչյանի միջոցով սիրահոժար տեղեկացնում է. «In unseren Akten findet sich Kein Hinweis auf ein Promotionsverfahren. Auch im Verzeichnis der Hochschulschriften, in dem die an deutschen Universitäten erfigreich absolvierten Promotionsverfahren aufgeföhrt sind, habe ich ihn nicht finde Können»: Այսինքն՝ Գերմանիայի գիտական աշխատանքների կենտրոնական գրանցամատյանում Կոմիտասը գրանցված չէ, ինչը նշանակում է, որ նա գիտական թեզ չի գրել և չի պաշտպանել:

Մենք սիրում ենք հպարտանալ մեր նախնիների կերպած արժեքներով: Իսկ որքան ենք հարգում դրանք, արդյո՞ք կրողն ենք այդ արժեքների և ուզում ենք մեր մեծերի հեղինակությունը լինել: Մենք կորողներ ենք կերպում նրանց հիշարակին, հարորներ քաղում նրանց մասին, ժամանակ առ ժամանակ մատուր, եթերը, համացանցը ողողում նրանց նվիրված զանազան հոդվածներով, հուշերով: Հետո հանդարտվում ու վերադառնում ենք մեր առօրեային և «մեծահոգաբար» դիրքում թե ինչպես է յուրացվում այն ինչով քիչ առաջ այդպես հպարտանում էինք: Գիրենք մեր երաժշտությունը, գնահատում ենք մեր լեզուն: Խոսքս մի քանի ազգագրական երգի

մասին չէ, այլ մեր նախնեաց պրոֆեսիոնալ երաժշտարվեստի փոքր ի շարք» պահպանված օրինակների, որոնք ընդունված է համարել զուտ եկեղեցական երգարվեստ: Մեզանում բնորոշ գիտեն այն հիմնավորապես: Երաժշտության փարսկական փետության Կոմիտասի դասագիրքը, որքան էլ թերի ու անավարտ, կարող էր հայ ազգային երաժշտական կրթական համակարգի հիմք լինել, նույնը կարելի է ասել և նրա եկեղեցական երաժշտությանը վերաբերող ուսումնասիրությունների մասին: Ցավոք Կոմիտասը մեր հասարակության ընկալմամբ ընդամենը ցեղասպանության զոհի խորհրդանիշ է, բայց ոչ ուսուցիչ:

Մենք սիրում ենք հպարտանալ մեր նախնիների թողած մեծակերպ արժեքներով: Դրանցից մեկը մեր լեզուն է, որը մենք անխնա աղավաղում ենք: «...խրաքանչիւր ազգի երաժշտութիւնն իր ազգի հնչական ելևէջներէն կը ծնի ու կը ծաւալի: Հայ լեզուն ունի իր յատուկ հնչատրութիւնը, ուրեմն եւ համապատասխանող երաժշտութիւնը» (16. էջ 83-91) գրել է վարդապետը իր «Հայը ունի ինքնուրոյն երաժշտութիւն» հոդվածում: Աղավաղելով մեր լեզուն, աղավաղում ենք նաև մեր երաժշտությունը և դրա հետ ավերում ենք մի ամբողջ քաղաքակրթական համակարգ: Կոմիտասի Բեռլինյան դասախոսությունից փակվորված միջազգային երաժշտական ընկերության Բեռլինի մասնաճյուղի քարտուղար, երաժշտագետ Մարս Զայեֆերյը գրել է. «Այն խորունկ հայեացքը, որով դուք, ի մօտոյ մեզ ներկայացրիք մեզինք բողոքովին հեռու գտնուող բարձր եւ զարգացած մի քաղաքակրթութեան վսեմ կարողութիւնը, - անակնկալօրէն հմտալից մատուցումն այն ամենի, որ արեւմտեան հնագոյն քաղաքակրթութեան ճանաչման համար իսկապէս բացառիկ նշանակութիւն ունեն, Ձեր դասախօսելու եւ երգելու կատարեալ արուեստն - սրանք բաներ են, որ մեզ զարմանք կարող էին պատճառել եւ որոնք վառ կմնան ձեր ունկնդիրների յիշողութեան մէջ» (1. էջ 242): Հագարանյակների ընթացքում մեր նախնիք քաղաքակրթություն և մշակույթ են սրբազան, որը մենք իրավունք չունենք մխտելու, վարկելու կամ այլոց նվիրելու: Հարյուր փարի առաջ հայը խնդիր ուներ փրկվելու, իսկ այսօր խնդիր ունի փրկելու, պաշտպանելու այն հարստությունը, որն իրեն ժառանգել են նախնիք:

## Ծ Ա Ն Ո Ւ Յ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Կոմիտաս վարդապետ, Նամականի, Եր., 2009 թ.: *Komitas vardapet*, Namakani, Yer., 2009 t.
2. Ազատեան Թ., Կոմիտաս վարդապետ. Իր կեանքն ու գործունեությունը, Հ. I, Կ. Պոլիս, 1931 թ.: *Azatean Th.*, Komitas vardapet. Ir keanqn u gortsuneutyune, H. I, K. Polis, 1931 t.
3. Գասպարյան Ս., Կոմիտաս, Եր., 1961 թ., **Шавер-дьян А., Комитас и армянская музыкальная культура, Ер., 1956.** *Gasparyan S.*, Komitas Yer., 1961 t., Shaverdyan A., Komitas i armyanskaya muzikal'naya kul'tura., Yer., 1956.
4. Ավանակ հայ երաժշտության պատմության, Եր., 1963

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(53)2017

- բ.: Aknark hay erazhshtutyanyan patmutyan., Yer., 1963 t.
5. *Մուրադյան Մ., Ուսուր Բեկ.*, Ուրվագիծ եզրի ժողովրդի, ազգապետների մի տոհմի, հայ – եզրիական կապերի պատմություն, Եր., 2012 թ.: *Muradyan M., Usub Bek.*, Urvagits ezdi zhoghovrdi, azgapetneri mi tohmi, hayezdiakan kaperi patmutyan, Yer., 2012 t.
  7. ԳԱԹ, Կ. Ֆ.: GAT, K.F.:
  8. Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1988 թ.: Patmabanasirakan handes, Yer., 1988 t.
  9. Հանդես ամսօրեայ, թիվ 8, Վիեննա, 1899 թ.: Handes amsoreay, tiv 8, Vienna, 1899 t.
  11. Բիւզանդիոն, Մարտ 15, Կ. Պոլիս–28, 1911 թ.: Byzandion, Mart 15, K. Polis 1910-28, 1911 t.
  12. Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս 1910 թ.: Amenun taret-zuytze, K. Polis, 1910 t.
  13. Բիւզանդիոն, Կ. Պոլիս 1911, Յունուար 19 – 1 փետրուար: Byzandion, K. Polis 1911, Ynuar 19-1 petrvar.
  14. Պատմաբանասիրական հանդես, Եր., 1965, թիվ 4: Patmabanasirakan handes, Yer., 1965, tiv 4:
  15. Մշակ, Թիֆլիս 1905, թիվ 65 և թիվ 66: Mshak, Tiflis 1905, tiv 65 ev tiv 66.
  16. Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Բ, Եր., 2005 թ.: Komitas vardapet, Usumnasirutivnner ev yoduatsner, girq B, Yer., 2005 t.
  24. Կոմիտաս վարդապետ, Նամականի, Եր., 2009 թ.: Komitas vardapet, Namakani, Yer., 2009 t.

Հ. Գ. 5 մարտի, 2015, հոդվածը հրատարակված է՝ Gagik-Harutyunyanofficial-page

Ներկայացված է՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, փոխանցված է՝ ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ պրն. Արտակ Դավթյանին:

**Բանալի-բառեր.** Կոմիտաս վարդապետ, դիպլոմային աշխատանք, քրդական երաժշտություն, Արքմեի Թեոդիկ, Հունբադի անվ. համալսարան, Բեռլինյան պահոց:

**Ключевые слова:** Архимандрит Комитас, дипломная работа, курдская музыка, Арюакуи Теодик, Университет им. Гумбольдта, Берлинский архив.

**Keywords:** Archimandrite Komitas, thesis, Kurdish music, Aryuaki Teodik, University of Humboldt, Berlin archive.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՄՈՒՇԵԳՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՎԱՀԱՆԻ երաժշտագետ, ավարտել է Երևանի Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիայի երաժշտագիտական բաժինը (1982): Աշխատում է Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի քանգարանում (ԳԱԹ), որպես երաժշտական ֆոնդի ավագ գիտաշխատող: Հեղինակ է մի շարք գիտական և հրատարակատեսակի հոդվածների ինչպես՝ «Երաժշտությունը, երաժշտագիտությունը և մենք», //Գարուն ամսագիր, Եր., 1993, թիվ 8, «Մի ստեղծագործության պատմություն», //Երկիր բերք, Եր., 1998, 1 հոկտեմբերի, «Հարիւրամեայ շփոթ, Կոմիտասի Քուրդ երաժշտության թեզը», Հայկագետան Հայագիտական Հանդես, Բեյրութ, 2017: Բնագրի վերծանել և կազմել է Ն. Գալադերյանի երկերի չորս հատոր՝ Խմբերգեր, 2001 թ. Գործիքային երկեր, 2002 թ. Չուգերգեր, 2003 թ., Օպերաներ, 2003թ., Գ. Սյունի «Հայ երաժշտություն», Եր., 2005 թ., Կոմիտաս վարդապետ «Ուսումնասիրություններ եւ յօդուածներ», գիրք Ա 2005 թ., գիրք Բ 2007 թ.: Ջեկուցումներով հանդես է եկել գիտաժողովներում՝ 2003 թ., «Շարա Տալյանի հոդվածները հայ երաժշտության և երաժշտների մասին» ԳԱԹ ցուցադրություն և գիտաժողով նվիրված Շ. Տալյանի 110 ամյակին, 2005 թ., «Աշուղական արվեստի մոմշները ԳԱԹ-ում», Երևանի ժողովրդական արվեստի քանգարան, 2011 թ., «Կոմիտասը և Ֆրանսիան», Գյումրի, Համաշխարհային մշակույթը և Հայաստանը Միջազգային 5-րդ գիտաժողով, 2014 թ., «Տիրան Չուխաճյանի արխիվը» ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ:

**Сведения об авторе:** МУШЕГЯН МАРИНА ВААГОВНА, музыковед. Окончила Ереванскую государственную консерваторию им. Комитаса в 1982 году. Работает в ереванском Музее литературы и искусства им. Е. Чаренца (МЛИ) старшим научным сотрудником музыкального фонда. Автор ряда научных и публицистических статей: “Музыка, музыковедение и мы” (//Гарун, Ереван, 1993, N8), “История одного произведения” (//Еркир, Ереван, 1998, 1 октября), “Столетняя возня, “диссертация” Комитаса о курдской музыке” (Бейрут, 2017 год, Армяноведческий журнал “Айказан”). Расшифровала и подготовила к изданию четыре тома Н. Галадеряна (Хоровые произведения, 2001; Инструментальные работы, 2002; Дуэты, 2003; Оперы, 2003; Г. Сюни “Армянская музыка” (Ереван, 2005), Комитас Вардапет “Исследования и статьи”, книга А (2005), книга Б (2007): Выступала с докладами на конференциях: “Статьи Шара Тальяна об армянской музыке и музыкантах” Выставка и конференция, посвященная Ш. Тальяну по случаю 110-летия, в МЛИ, (2003), “Образцы искусства ашугов в МЛИ” Ереванский музей народного творчества (2011), “Комитас и Франция” Гюмри, Всемирная культура и Армения, V Международная Конференция (2014), “Архив Тиграна Чухаճյան”, ИИ НАН РА.

**Information about the author:** MUSHEGHYAN MARINA VAHAN, Musicologist, graduated from Yerevan Komitas State Conservatoire in 1982. Works at the Museum of Literature and Art (MAL) after Yeghishe Charents as a senior research fellow at the music foundation. She is author of a number of scientific and publicist articles such as “Music, Musicology and We”, //Garun, Yerevan, 1993, N8, “The History of a Creation”, //Yerkir, Yerevan, 1998, October 1, “A Hundred-Years-Old Confusion, Komitas and His Dissertation on Kurdish Music” //Haigazian Armenological Review, Beirut, 2017. M. Moushegian had deciphered from the original and compiled by four volumes of Galaderyan’s books, Works for Choirs, 2001 Instrumental Works, 2002 Duets, 2003 Operas, 2003; Syuni “Armenian Music” Yer., 2005, Komitas Vardapet “Studies and Articles”, book A 2005, book B 2007: She made reports at the conferences; in 2003. “Shara Talyan’s Articles on Armenian Music and Musicians”, MAL, Expositin and Conference dedicated to Sh. Talyans 110<sup>th</sup> anniversary, “Samples of Ashughs Art in the MAL” Yer., Folk Art Museum, 2011. “Komitas and France” Gyumri, World Culture and Armenia V International Conference, 2014., “Archive of Tigran Choukhajyan” NAS RA Art Institute.

## Резюме

Музыковед, старший научный сотрудник музыкального фонда Музея литературы и искусства им. Е. Чаренца, *Марина Вагаювна Мушегян*. - “Столетняя история”.

Биография Комитаса Вардапета достаточно изучена, но в профессиональных и журналистских кругах можно встретить ложные утверждения, как, например, о дипломной работе или диссертации Комитаса на тему курдской музыки. Это утверждение стало предметом биографических искажений. Ярким примером является издание “Усуб Бек, история отношений между армянами и езидами” (2012). Глубокое исследование показало, что Комитас при окончании Берлинского университета не защищал диссертацию о курдских песнях. Он вообще не писал дипломную или диссертационную работу, что отнюдь не умаляет значение художника, но поднимает вопрос об изменении стереотипного отношения к Комитасу.

## Summary

Musicologist, the senior research associate of musical fund of the Museum of literature and art of Charents *Marina Vahan Musheghyan*. - “Centenary history”.

Komitas Archimandrite’s biography is rather studied but in professional and journalistic circles it is possible to meet false statements for example about the thesis or Komitas’s thesis on the Kurdish music. This statement became a subject of biographic distortions. A striking example is the “Usub Beck, History of the Relations between Armenians and Yezdi” (2012). The in-depth study has shown that Komitas when graduating from Berlin university didn’t defend the dissertation about the Kurdish songs. He didn’t write dissertation at all which does not belittle value of the artist at all, but brings up a question of change of the stereotypic attitude towards Komitas.